ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 մարտի 2016 թվականի N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԱԼՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ Վ.ՍԵՎՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ, ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2016թ.մարտի 1-ի N 01/02.1/558-16 գրությունը և Վ.Սևումյանի անձնական դիմումը, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. <<Ալվանքի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար 2016թվականի մարտի 3-ից Վերա Սևումյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. <<Ալվանքի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Զոյա Համբարձումյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը լուծել 2016թ. մարտի 3-ից:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ասրյան Աշոտ	Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Կարապետյան Նելլի	աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ
Հարությունյան Գայյա	աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Սևումյան Վերա	<<Ալվանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Համբարձումյան Զոյա	<<Ալվանքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող)

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2016թ. մարտի 2
ք. Կապան